

ՊԱՇՏՈՆ

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԱՅՐ
ԱՇԽԱՏԱՆՔԸ ՍԿՍԵԼՈՒ ԱՄՍԱԹԻՎ
ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՎԵՐՋՆԱԺԱՄԿԵՏ
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԺԱՄԿԵՏ

Վճարային համակարգերի հետ համագործակցության
և քարտային գործարքների մոնիտորինգի բաժին,
Առաջատար մասնագետ
Լրիվ դրույք
ք. Երևան, ՀՀ
Հնարավորինս շուտ
12/08/2022
Անորոշ՝ երեք ամիս փորձաշրջանով

«Այդի Բանկ» ՓԲԸ-ն Վճարային համակարգերի հետ համագործակցության և քարտային գործարքների մոնիտորինգի բաժնի Առաջատար մասնագետի հաստիքը զբաղեցնելու համար փնտրում է փորձառու, մոտիվացված և հմուտ թեկնածուի, ով պատասխանատու է ստորև նշված պարտականությունները կատարելու համար:

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Իրականացնում է Բանկի քարտային հաշիվներին առաջացող դեբիտորական պարտքերի ուսումնասիրություն,
- Իրականացնում է քարտային հաշիվների դեբիտորական պարտքերի առաջացման պատճառների վերլուծություն և անհրաժեշտության դեպքում տրամադրում շահագրգիռ ստորաբաժանումներին,
- Իրականացնում է հաճախորդների խնդրահարույց հարցերի ուսումնասիրություն, կարգավորում և անհրաժեշտ տեղեկատվության տրամադրում,
- Իրականացնում է միջազգային վճարային համակարգերի շրջանակներում բողոքարկումների ուսումնասիրություն, վերլուծություն և կատարում:

ՊԱՅՄԱՆԱԳՐՈՂ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄՆԵՐ

- Բարձրագույն կրթություն
- Բանկային ոլորտում նվազագույնը 2 տարվա աշխատանքային փորձ
- Հաղորդակցման հմտություններ
- Անգլերենի գերազանց իմացություն
- Ռուսերենի լավ իմացություն
- Խնդիրների արագ և արդյունավետ լուծման կարողություններ
- Վերլուծական մտածողություն
- Թիմում արդյունավետ աշխատելու ունակություն
- Ծշտապահություն և պատասխանատվության զգացում
- Գործարար էթիկայի նորմերի իմացություն և դրանց կիրառում

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Փորձաշրջանի բարեհաջող ավարտից հետո Բանկն իր աշխատակիցներին առաջարկում է արտոնությունների լայն փաթեթ, մասնավորապես, բժշկական ապահովագրություն, պարգևատրման ճկուն համակարգ, սպորտ ակումբների ծառայություններից օգտվելու կորպորատիվ փաթեթ, արտոնյալ պայմաններով բանկային ծառայություններ և այլն:

ԴԻՄԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

Եթե ձեր գիտելիքները, մասնագիտական փորձն և որակավորումները համապատասխանում են վերը նշված հաստիքի պահանջներին և դուք հետաքրքրված եք միանալու ԱյԴԻ Բանկի թիմին, խնդրում ենք լրացնել հայտարարությանը կից ներկայացված դիմում-հայտը և այն ուղարկել hr@idbank.am էլ.փոստի հասցեին՝ մինչև հայտարարության վերջնաժամկետը՝ վերնագիր (subject) տողում պարտադիր նշելով հաստիքի անվանումը: Հարցազրույցի կիրավիրվեն նախնական ընտրությունը անցած դիմորդները:

ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«ԱյԴԻ Բանկը» հիմնադրվել է 1990թ.-ին «Անելիք Բանկ» անվանումով, իսկ 2018թ. Հունիսի 4-ից Բանկը ներկայանում է «ԱյԴԻ Բանկ» անվանումով: ԱյԴԻ Բանկի առաքելություն է լինել առաջին ընտրության Բանկ հաճախորդների համար որպես լավագույն նորարար Բանկ՝ հաճախորդներին տրամադրելով անհատական մոտեցմամբ արդիական թվային լուծումներ: Բանկի մասին հավելյալ տեղեկատվության համար կարող եք այցելել Բանկի պաշտոնական կայքը <https://www.idbank.am/>: